

Վիճակագրութիւն Գաղղիոյ :

Օրէնսդրաց ժողովքը մայիսի 28 և 29 նիստերուն մէջ դուրս հանած է օրինաց առաջարկութիւն մը, 'ի կազմութիւն երկուց Արկեղաց ապահովագրութեան յօգուտ գործաւորաց խումբերուն . այս Արկեղաց մին պիտի վճարէ այս ինչ որոշեալ գումար մը իր ապահովագրեալ վախճանելոյն ժառանգաց կամ որոնց որ կ'իյնայ, միւս Արկղը ցկեանս թոշակով մը պիտի օգնէ այն ապահովագրեալ գործաւորաց, որք իրենց արհեստը ընելու միջոց այն պիտի վէրք մը ստանան, որով ալ չկարենան աշխատիլ . իսկ որոնք որ կեանքերնին կորսնցունեն նոյն արհեստին պատճառաւ, անոնց այրեացը և դեռահասակ որդւոցը օգնութիւն պիտի ընէ : Գործաւորը կրնայ ապահովագրիլ, կամ մի անգամով բոլոր պահանջեալ դրամը տալով, և կամ տարեկան գումար մը վճարելով :

Գաղղիա 26 միլիոն գործաւոր ունի, որոնցմէ 20 միլիոնը երկրագործք են, և մնացածները արհեստաւոր :

Պ. տը Ֆորքատ լա Ռոքէթին, երկրագործութեան, վաճառականութեան և հասարակաց աշխատութեանց պաշտօնէին, սոյն բանին համար ըրած յայտարարութենէն կ'առնուի՝ հետեւեալ վիճակագրական յօդուածները :

« Հանքերու կողմանէ, ահաւասիկ վերջի հինգ տարիներուս վիճակագրութիւններէն առաջ եկածը : Այս հանքաց մէջ կը համրուին 226,000 գործաւորք : Տարեկան արկածք ընդ վերաւոր և ընդ մեռեալ 1848ի կ'ենեն . վերաւորելոց թիւն է 1511, իսկ մեռնողներունը 337 :

« Արքունի ելումուտից նկատմամբ պէտք է ծանուցանել, որ գործաւորներէն մեռնողները տէրութեան մեծ անպատուութիւն մը չեն բերեր . միայն՝ արդարութիւնը կը պահանջէ որ անոնց այրեացը և որդւոց օգնութիւն մը ըլլուի . ուստի ասոնց կը կապուի երկու

եկամուտ այն թոշակէն զոր գործաւորը պիտի ընդունէր՝ թէ որ բոլորովին աշխատանքի անկարող ընող վէրքով մը վերաւորուէր :

« Նը մնան 1511 վերաւորք : Հաշիւները կը հաստատեն որ ասոնց ալ մեծ մասին վէրքերը ժամանակաւոր են, որով բոլորովին անկարող չեն ըլլար աշխատանաց : Այսպէսով, 100,000 գործաւորաց մէջէն միայն 320 պիտի մասնակցին այս օրինաց օգուտներուն և կրկին թոշակաց :

« Երկաթուղեաց արհեստը շատ աւելի նուազ վտանգաւոր է : Ասիկայ կը գործածէ գրեթէ 100,000 հոգի :

« Կ'առնուի 1862 և 1863 տարիները . առաջնոյն մէջ 600 հոգի եղած են մեռեալք և վերաւորք . երկրորդին մէջ 636 :

« Ուրեմն երկաթուղեաց արհեստին առթիւ եղած վտանգները հանքաց մէջ եղածներէն անհամեմատ աւելի քիչ են : 100,000 մէջէն միայն 200 կամ քիչ աւելի անձանց պէտք պիտի ըլլայ վճարել :

« Ուրիշ արհեստից մէջ հանդիպած արկածները խիստ սակաւաթիւ են : Ասոնք չեն գործածեր այնպիսի զօրաւոր մեքենայներ որոնք կը սպառնան կենաց և գործաւորաց մեծ բազմութեան մը մահուան պատճառ կ'ըլլան :

Շոգեշարժ մեքենայ 'ի գրութի :

Հռենոսեան գաւառաց մէջ Տուիսպուրկի կալուածատէր մը 1862ին բողոքեց Քոլոնիա-Մինտրնի երկաթուղոյն ընկերութեան դէմ, և խնդրեց որ երկաթուղոյն անցնելուն պատճառաւ իւր կալուածոց եղած ֆնասուց հատուցում մ'ըլլուի : Դատաստանէ մը ետքը որ հինգ տարի տեւեց, վճռեցաւ որ 1,500 դալերի գումար մը տրուի, զոր թէպէտ շատ անգամ կալուածատէրն խնդրեց, սակայն դատապարտեալ ընկերութիւնը կը դանդաղէր վճարելու :